



ARMSWISSBANK
Private & Investment Banking

**<<ԱՐՑԱԽ ՀԷԿ>> ԲԲԸ-ի
բաժնետերերի իրավունքներն ու
հնարավորությունները**

Սվետլանա Ղլիջյան
**<<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ**

© 2011 ARMSWISSBANK



<<ԱՐՑԱԽ ՀԷԿ>> ԲԲԸ բաժնետերերը և նրանց իրավունքները

<<ԱՐՑԱԽ ՀԷԿ>> ԲԲԸ-ի բաժնետեր է ցանկացած անձ, ում սեփականության իրավունքով պատկանում են Ընկերության 1 և ավելի բաժնետոմսեր:

Բաժնետոմսերը իրենց սեփականատերերին տալիս են հետևյալ խումբ իրավունքները՝

❖ գույքային /շահութաբաժիններ ստանալու, բաժնետոմսերը վաճառելու և այլ/

❖ նշ գույքային /Բաժնետերերի ժողովին մասնակցելու, Ընկերության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և այլ/:



<<ԱՐՑԱԽ ՀԷԿ>> ԲԲԸ կանոնադրական կապիտալը տրոհված է 7,362,074 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, որոնք պատկանում են Ընկերության շուրջ 1200 բաժնետերերի:

Բաժնետերերի հիմնական իրավունքները. գույքային իրավունքներ

Բաժնետոմսերը գնվում են սպասելիքների հիման վրա, ոչ փաստերի:

Ջերալդ Լոեր

- ❖ *Շահաբաժինների ձևով մաս ստանալ Ընկերության շահույթից.*
- ❖ *Նախապատվության իրավունքով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.*
- ❖ *Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի լուծարային արժեքը.*
- ❖ *Օտարել կամ այլ ձևով փոխանցել իր բաժնետոմսը:*



Բաժնետերերի հիմնական իրավունքները. ոչ գույքային իրավունքներ

- ❖ *Մասնակցել Բաժնետերերի ընդհանուր ժողովին անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով,*
- ❖ *Մասնակցել Ընկերության կառավարմանը,*
- ❖ *Ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք չհանդիսացող ցանկացած տեղեկատվություն.*
- ❖ *Դիմել դատարան՝ Ժողովի որոշումների բողոքարկման նպատակով:*



Բաժնետերերի առանձնահատուկ իրավունքները

ԲԱԺԵՏԻՐՈՋ ԲԱԺՆԵՄԱՍԸ, %	Հավելյալ իրավունքների ծավալը և բովանդակությունը
Առնվազն 1 տոկոս /միայնակ կամ համատեղ/	<input type="checkbox"/> Խորհրդի անդամների, տնօրենի, վարչության ու տնօրինության անդամների, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպության և կառավարչի դեմ հայցով դիմել դատարան՝ Ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով:
Առնվազն 2 տոկոս	<input type="checkbox"/> Երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, առաջարկել խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ:
Առնվազն 5 տոկոս	<input type="checkbox"/> Պահանջել իրականացվել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ստուգում:
Քվեարկող բաժնետոմսերի առնվազ 10 տոկոս	<input type="checkbox"/> Առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցիչներին: <input type="checkbox"/> Արտահերթ ժողով գումարելու պահանջի ներկայացում:

Շահութաբաժիններ

Ընկերության գուտ շահույթը նրա բաժնետերերի սեփականությունն է:

- ❖ Շահութաբաժինները վճարվում են Ընկերության գուտ շահույթից և միայն ՀՀ դրամով:
- ❖ Շահութաբաժինները կարող են վճարվել եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան :
- ❖ Շահութաբաժինների վճարման չափի և ձևի մասին որոշում կայացնում է.
 - Խորհուրդը՝ միջանկյալ շահութաբաժինների դեպքում,
 - Խորհրդի առաջարկությամբ՝ Ժողովը՝ տարեկան շահութաբաժինների դեպքում:



2009թ.-ի ֆինանսական արդյունքներով <<ԱՐՑԱԽ ՀԷԿ>> ԲԲԸ-ն իր գուտ շահույթի շուրջ 93%-ը վճարել է բաժնետերերին:

Շահութաբաժինների վճարումը Ընկերության կողմից չի երաշխավորվում:

Ուժքեր և ինչպես կարող են ստանալ շահութաբաժիններ

<<ԱՐՑԱԽ ՀԷԿ>> ԲԲԸ շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները

- ❖ Զուտ շահույթի ուղղում շահութաբաժինների վճարմանը և վերաներդրումներին,
- ❖ Ընկերության և բաժնետերերի շահերի համադրություն,
- ❖ Բաժնետերերի իրավունքների պաշտպանություն,
- ❖ Շահութաբաժինների չափի սահմանման և վճարման մեխանիզմների թափանցիկություն



- ❖ **2010թ.-ի ֆինանսական արդյունքներով** Ընկերությունը նախատեսում է շահաբաժինների վճարում՝ 1 բաժնետոմսի դիմաց՝ 100 ՀՀ դրամ/2010թ-ի զուտ շահույթի **64%-ը**:
- ❖ Շահաբաժիններ կարող են ստանալ **2011թ.-ի ապրիլի 21-ի** դրությամբ Ռեեստրում ընդգրկված բաժնետերերը:
- ❖ Շահաբաժինների վճարումը նախատեսվում է սկսել **2011թ.-ի հունիսի 20-ից**:

Տեղեկությունների ստացում



Բաժնետերերն իրավունք ունեն Ընկերության գործունեության վերաբերյալ ստանալու արտադրական, առևտրային և այլ գաղտնիք չպարունակող ցանկացած տեղեկատվություն՝

- ❖ Էլեկտրոնային և տպագիր ԶԼՄ-ներից,
- ❖ Ընկերության ինտերնետային կայքից,
- ❖ Ընկերությունից փաստաթղթեր պահանջելու միջոցով,
- ❖ Հանդիպումների, մամլո ասուլիսների և այլ միջոցներով:



Տեղեկատվության բացահայտում

❖ Ընկերության գործունեության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ընկերության ինտերնետային կայքում՝ www.artsakhhpp.com հասցեով:

❖ Բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը հնգօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել հրապարակման ենթակա փաստաթղթերի պատճենները՝ գանձելով պատրաստման և առաքման ծախսերը չգերազանցող վճար:

Ինտերնետային կայքը՝ www.artsakhpp.com

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

- ❖ Ռազմավարություն
- ❖ Ընկերության պատմությունը
- ❖ Ընկերության ղեկավարում
- ❖ Ֆինանսա-տնտեսական գործունեություն
- ❖ Ներդրումներ և գիտա-տեխնիկական գործունեություն
- ❖ Կապի միջոցներ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ

- ❖ Բաժնետիրական կապիտալ
- ❖ Ընկերությունը արժեթղթերի շուկայում
- ❖ Տեղեկատվության բացահայտում
- ❖ Ընկերության աուդիտորը
- ❖ Հղեք Ձեր հարցերը

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

- ❖ Լուսանկարներ
- ❖ Հաշվետվություններ և պրեզենտացիաներ
- ❖ Նորություններ
- ❖ Հաճախակի տրվող հարցեր



ARMSWISSBANK
Private & Investment Banking

Բաժնետոմսերի օտարման իրավունք

<<ԱՐՑԱԽ ՀԷԿ>> ԲԲԸ-ի բաժնետոմսերի իրացվելիության ապահովման գործոններն են՝

- ❖ Բաժնետոմսերը ցուցակված են <<ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ>> ֆոնդային բորսայում և հանդիսանում են առք ու վաճառքի առարկա:
- ❖ <<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ-ն հանդիսանում է Ընկերության բաժնետոմսերի շուկա ստեղծող և ապահովում է առքի և վաճառքի գծով ամենօրյա պարտադիր գնանշումներ :



Ցուցակման պահից ի վեր Ընկերության բաժնետոմսերով իրականացվել է 14 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 14 բորսայական գործարք, միջին գինը կազմել է 1,110 ՀՀ դրամ:
Գործարքների գերակշիռ մասը իրականացվել է շուկա ստեղծողի մասնակցությամբ:

Ընկերության կառավարմանը մասնակցություն

Ընկերության բաժնետերերը ժողովին կարող են մասնակցել իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով:

- ❖ Ժողովը կարող է գումարվել բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով:
- ❖ Հեռակա քվեարկությամբ անցկացվող ժողովին մասնակցությունը տեղի է ունենում քվեաթերթիկը լրացնելու և Ընկերություն ներկայացնելու միջոցով:
- ❖ Համատեղ ներկայությամբ անցկացվող ժողովին (տարեկան ժողով) մասնակցությունը տեղի է ունենում, ինչպես քվեաթերթիկը լրացնելու և Ընկերություն ներկայացնելու, այնպես էլ ժողովին ներկա գտնվելու միջոցով, իսկ քվեարկությունը իրականացնել օրակարգի հարցերը քննարկելուց հետո:



Բաժնետերը ժողովին կարող է մասնակցել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

Ժողովը ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆ Է:

<<ԱՐՑԱԽ ՀԷԿ>> ԲԲԸ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ժողովին մասնակցության ծանուցում

- ❖ Ժողովի ծանուցման ստացում առնվազն 30 օր առաջ, խորհրդի անդամի ընտրելու դեպքում՝ առնվազն 45 օր առաջ,
- ❖ Քվեաթերթիկների տրամադրում,
- ❖ Տեղեկությունների ստացում էլեկտրոնային և/կամ փաստաթղթային եղանակով և նախատեսված կապի միջոցով, իսկ դրա բացակայության դեպքում՝ Ընկերությունից առձեռն,
- ❖ Քվեարկության արդյունքներին և ժողովի կողմից ընդունված որոշումներին ծանոթացում Ընկերության ինտերնետային էջում այն բացահայտելու միջոցով կամ պահանջի ներկայացման հիման վրա:



Կորպորատիվ քարտուղարի ինստիտուտը

- ❖ Ապահովում է բաժնետերերին բացահայտման ենթակա փաստաթղթերի և տեղեկությունների տրամադրումը,
- ❖ Ապահովում է **Ընկերության** և բաժնետերերի համագործակցությունը՝ ընդունելով և նախնական գնահատական տալով ստացված նամակներին, պահանջներին և դիմումներին,
- ❖ Բաժնետերերին իրենց իրավունքների հետ կապված **խորհրդատվություն** է տրամադրում,
- ❖ Ապահովում է **շահաբաժիններ** ստանալու իրավունք ունեցող բաժնետերերին եկամուտների վճարման կազմակերպչական վերահսկողությունը:

Կորպորատիվ քարտուղարի ինստիտուտը կոչված է բաժնետերերի օրինական իրավունքների և շահերի ապահովմանը:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ARMSWISSBANK
Private & Investment Banking

հասցե՝ ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10
հեռ.՝ (+374 10) 540728, ֆաքս՝ (+374 10) 540675, 529591
info@armswissbank.am, www.armswissbank.am